

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ**

Արձանագրություն թիվ 3

16.12.2020թ.

**1. 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանը գրավոր կամ բանավոր անցկացնելու մասին հարցի վերաբերյալ.**

Հայաստանի Հանրապետությունում ստեղծված հետպատերազմական իրավիճակով ու համավարակով պայմանավորված, ինչպես նաև դեկանների առաջարկով, 2020-2021 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանն անցկացնել գրավոր կամ բանավոր:

**2. 2020-2021 ուս. տարվա բակալավրի կրթական ծրագրերով հեռակա ուսուցման լրացուցիչ ընդունելության մրցույթի անցկացման հարցի վերաբերյալ.**

Ռազմական գործողությունների և COVID-19 հիվանդության պատճառով բակալավրի կրթական ծրագրերով հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին դիմում-հայտ ներկայացրած, սակայն քննություն չհանձնած, ինչպես նաև փաստաթղթերի ընդունման սահմանված ժամկետում դիմում-հայտ չներկայացրած անձանց ընդունելության մրցույթն իրականացնել ատեստատի գնահատականների հիման վրա:

**3. Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կանոնակարգի հաստատման վերաբերյալ.**

Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կանոնակարգը:

**4. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման չափորոշիչների 12-րդ կետում փոփոխություններ կատարելու մասին հարցի վերաբերյալ.**

Հաստատել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման չափորոշիչի 12-րդ կետում առաջարկվող փոփոխությունը հետևյալ շարադրանքով.

«Մեկ մագիստրոսի ղեկավարմանը հատկացնել 50 ժամ»:

